



ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐ ԱՅԼՆ

ՔԱՅՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամբողջ 28րդ տարեշրջանի (1912 օգոստոս-1913 յուլիս) բաժնորգադինն է 20 ֆրանգ. Թիւրքիայի և Պարսկաստանի համար 10 ֆրանգ, ԿԱՆԻՅԻԿ: Ամսական բաժնորգադինն է 2 ֆրանգ. Թիւրքիայի և Պարսկաստանի համար 1 ֆր.: Նամակ կամ գրամը կը կոչուի այս հասցէով. M. PORTOUKALIAN Directeur du journal Arménia MARSEILLE (France)

ԻԸ ՏԱՐԻ

Թիի 2

1912 ՕԳՈՍՏՈՍ 14 ԴՂ.

(Շ. Տ. 1912 Օգոստոս 1)

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն զրկուած գրութիւնները: Պարտաւոր չէ վերագրուել չհրատարակուած ձեռագիրները: Ծանուցումներ կը ընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով: Ծանուցման 1 միջկգրէրը լսանքի միջոցով: 1 փոխգրիչը 2 անգամ: Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau de la Rédaction: Place Alexandre-Labadie, 17.

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ «ԱՐՄԵՆԻԱ» Ի ԻԸ ՏԱՐԵՇՐՋԱՆԻՆ (1912 ՕԳՈՍՏՈՍ — 1913 ՅՈՒԼԻՍ)

Ամբողջ 28րդ տարեշրջանի (1912 օգոստոս-1913 յուլիս) բաժնորգադինն է 20 ֆրանգ (4 տուար ամերիկեան կամ 7 րուբլ և 50 կպի. ռուսական) ամէն տեղի համար, ի բաց առեալ Թիւրքիան և Պարսկաստանը, ուր կը զրկուի կէս բաժնորգադինով, այսինքն ամբողջ տարեշրջանին համար 10 ֆրանգ բաժնորգադինով: Կարելի է բաժնորգադինը նաև քանի՜ ամսի համար որ ուզուի, ամսական 2 ֆրանգ (40 սենթ = 75 կպի.) հաշուելով, կամ 1 ֆրանգ Թիւրքիայի և Պարսկաստանի համար:

Յայտնի է արդէն թէ անոնք որ «Արմենիայի Օժանդակ» արձանագրուած են մեր հրատարակած Օժանդակ-կուսեան Կանոնադրին համեմատ, իբրևուր կոչուեան Արմենիա ստանալու, քանի՜ անձի համար որ ուզեն, իրենց ստացած լրագրի ծրարին մէջ գրուելով և կէս բաժնորգադինով, այսինքն ամբողջ շրջանին համար 10 ֆրանգով կամ ամսական 1 ֆրով: Կարելի է նաև Օժանդակի նշանակած բաժնորգի հասցէին ուղղակի զրկել թերթը, 12½ ֆր. (2½ տր.) բաժնորգադինով:

«ԱՐՄԵՆԻԱ» Ի ՅՈՒԼԻՍ

Արմենիայի Ա տարեշրջանի թիւերն որոնք բոլորովին սպառած են, շատերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանի մէջ Մ. Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն գէթ 30ի չափ ամբողջուած են այս Յոշարարի մէջ որ ութամսալ գիրքով 124 երեսներ կը բաղկանայ: Գինն է 1 ֆր. և 40 սանդիւմ: Տարածելու համար մէկ անգամէն 10 օրինակ գնողին կը զրկենք 10 օրինակը, ապահովագրուած ծրարով, 10 ֆրանգի փոխարէն: Դիմել Արմենիայի խմբագրութեան:

ՔԱՅՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Ռուսիայի Նիքոլայ Կայսրին և Ամենայն Հայոց Կաթողիկոսին փոխանակած հետազոտութիւնը. — Միւրսեօրինութեան հանդիս եղիւր Կ. Պոլսի. — Նամակ Թիւրքիան (4. պոլիս). — Հայերի թիւը քիւ. — Ամերիկայի Հայերի Եկեղեցական գործերը. — Վան և Բաղէշ նահանգների տնտեսական վիճակը 1911ին. — Երկրաշարժ Գ. պոլսի ու Տարսուսի մէջ և մտակայքերը. — Թիւրքական լուրեր. — Քոչաւարի կատարածը. — Վարչապետ Տ. Փուանգաթի Պետերբուրգ ուղեորութիւնը. — Պարսկաստան. — Ծանուցումներ:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԳ

Կը յիշեցունենք մեր բաժնորգներին որ թէ՛ լրագրական ընդհանուր սովորութիւնը յարգելու և թէ՛ մեր գործին զիւրութիւն մը տուած լինելու համար պէտք է փութալ բաժնորգադինը զրկուելու որ ԿԱՆԻՅԻԿ է:

ՌՈՒՄԻՆԻ ՆԻՔՈՂԱ ԿԱՅՍՐԻ ԵՒ ԱՄԵՆԱՅԻՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՓՈՒՆԵԿԱԿՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐԱՆՆԵՐԸ

Ամենայն Հայոց նորընտիր կաթողիկոս Գեորգ Ե. յուլիս 1/14ին իր օժան առթով բարեմաղթութեան հեռագիր մը զրկած լինելով Ռուսիայի կայսրին, ի պատասխան ստացած է հետեւեալ հեռագիրը.

ՅՁ յուլիս

«Նորին վեհախառնութեան Գեորգ Կաթողիկոսի Ամենայն Հայոց յիշմիստիւն»

Ի սրտէ շնորհակալ եմ ի Ձէնդ և յանձնարարեմ հաղորդել ժողովեալ ներկայացուցչաց հօտին Ձերոյ զիմ շնորհակալիս յաղագս աղօթից և բարեմաղթութեանց վասն իմ և ամբողջ ընտանեացս: Առաքեմ առ Ձեզ զըրտազին ցանկութիւնս վասն երկարատե և փառաւոր ծառայութեան Ձերոյ ի բարօրութիւն համայն աղգին Հայոց:

ՆԻԿՈՂԱՅ

Ի 1 յուլիս 1912 ամի Նորին Ս. Օնորեան հետազոտող յաւնուն թագաւոր Կայսեր.

«Նորին կայսերական Մեծաբեան թագաւոր Կայսեր յայտնաւոր աւուր ու Օժան իմոյ, բաղաւոր համարեմ զիս որ կանել առ ոսո Ձերոյն կայսերական Մեծաբեան զգայմունս հաւատարիմ հպատակութեանս և ժողովեալ իս. ի վիճակին ներկայացուցչաց հօտին իմոյ, վերառաքելով առաջի Միաձեռնեղ Օնորեոյ շերտազին ազօթս վասն պարգևելոյ Ձերոյ կայսերական Մեծաբեան, թագաւորաց կայսրոնեաց և յառաւակին և համայն Օգոստոսի քառասուն բազում ամս ի փառս և յերջանկութիւն Մեծին Ռուսիոյ:

ԳԵՈՐԳ

Կաթողիկոս Ամենայն Հայոց

ՄԻԻՌՈՒՄՈՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐԱՆՆԵՐԸ ԵՂՄԻՂԵՆԻ ՄԷՁ

Ս. Էլմիաձեի Օրինօգը յուլիս 16/29 ամսաթիւ պաշտօնագրով մը ծանուցած է Եւրոպայի Առաջնորդութեան թէ վեհ. Գեորգ Ե. կաթողիկոսը հանդերձեալ է ս. միւսունի օրհնութիւն կատարել Հայաստանայց եկեղեցիի հնաւեղ սովորութեան համեմատ Ս. Էլմիաձեի մայրաւորութեամբ, այս առիտ սեպտ. 30/13 հոկտեմբերին, վարադայ Ս. Խաչի տօնի օրը:

Ինչպէս յայտնի է, միւսունի օրհնութեան հանգստին ներկայ կը գտնուի ահագին բազմութիւն ուխտաւորներ ի հետաքրքրելու թէ՛ հայ և թէ՛ օտարազգի, որոնք Ռուսիայի զանազան կողմերէն և արտասահմանի երկիրներէն կերթան տեսնել միւսունի օրհնութեան այդ արարողութիւնը որ յաճախ կատարուող բան մը չէ և Հայաստանայց եկեղեցիին միայն յատուկ է:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳՐԻԱԿԵՆ

Կ. պոլիս, յու. 22/4 օգոստ. 1912  
Տանկաստան իւր մահու և կենաց մեծազոյն ճգնաժամերէն մին անցը ներու վրայ է Պօլիս իւր բոլոր ա.

ւազանիով, խորհրդարանով և կառավարական ամբողջ կազմով միասին խաւար անորոշութեան մը մէջ է թէ ի՞նչ պիտի պատահի վաղը. երկրին տնտեսական կեանքը՝ պետութիւնը կազմող զանազան ազգութեանց ներքին ազգային յասակաբանութիւնը ամբողջովին կասած է քաղաքական այն քառասուն լարերին թոսին մէջ:

Սկիւզէն եւրոպական թերթերու քաջուած հեռագիրներ կը տեղեկացընեն թէ ապստամբած Ալպանիացիք անպայման կը պահանջեն Համիդի Ի գահ բարձրացումը և քրիստոնեաներու զինուորագրութեան օրհնութիւն իջումը: Ներկայ Դահլիճը և Երեսփ. ժողովը միշտ զեմ առ զեմ պայքարի մէջ, խորհրդարանին լուծումը գրեթէ անխուսափելիօրէն օրոշուած, Պոլսոյ կացութիւնը առաւել քան երբեք կճառտ, Ռուսիա միշտ տենդոտ պատրաստութեան մէջ ծովէն և ցամաքէն, թուրք և գաւառապետ զինուորներ օրերով պատերազմի մէջ սահմանադաշտները, ի թիթհատը իւր իսկ սխալներովը իւր գերեզմանը բացած ու մէջ մտած, պոսական կը պայթին ամէն օր շաքանակ կաղիններու նման Մա. կեդոնիոյ մէջ, Պոլսոյ մէջ ներկայաւոր հեծելազորքը ոտքի վրայ մայրաքաղաքին ապահովութեանը կը հսկէ ունէ անակնկալի դէմ, Ալպանիոյ բոլոր կառավարական պաշտօնատնները, զօրանոցները, մթերանոցները Ալպանիացուց ձեռքը տնցած և թուրք պաշտօնեայնները վաւերաւորութեամբ ահա թէ ուր կը գտնուինք:

Երկրած յամառ զրոյցներու նախելով, իտալեթուրք պատերազմին վերջ մը տալու հաշտութեան բանակցութիւնները սկսուած պահուն՝ Ռուսիա ալ անմիջապէս նեղուցներու խնդիրը մէջտեղ պիտի դնէ՝ որու մասին կըսուի թէ Ռուսիա համաձայնութեան մը եկած է Գերմանիոյ և Անգլիոյ հետ:



Այսպես ցիք էին որ առին մահացու հարուածը իթթիհատի ճիշդ սրահին, և երկրին մէջ անպարտելի համարուող սոյն կուսակցութիւնը լաթխտեցին իրենց սաքերուն ներքին, և առոր ալ պատճառը նոյն ինքն իթթիհատն է որ չի կրցաւ սիրաշահել ժամանակին անկեղծ կերպով այն քան կտրիճ և պատուական ահարկու ցեղ մը: Այսպիսի ցիք թուով շուրջ 2 1/2 միլիոն հոգի՝ մեզ Հայոցս նման ալեոր ցեղ մըն են, ամեն ապարէզի տակ, անվեհեր կառուղներ, անկախութեան սիրահար, հըրաշալի հազարապետութեան տեր, բաժնուած երեք կրօնքներու՝ մահ. մէտականութեան, կաթողիկոսութեան և յունաղաւանութեան, հիւսիսային Ալպանիոյ մէջ կէկա և հարաւային Ալպանիոյ մէջ թոսքա անուններով: Կէկաները մեծ մասամբ անու խաշնարածներ են մահմետական, իսկ թոսքաները քրիստոնէայ յաւալադէմ տարր մը, համեմատաբար հարուստ՝ որոնք ունին իրենց թերթերը և մեծկակ գաղթականութիւն մըն ալ Ամերիկայի մէջ: Ալպանիացի լատին ցեղին մէջ ձուլուած՝ մեզ Հայոցս ծանօթ այս հին Աղուանները, ունեցած են կարևոր դէմքեր ինչպէս իսքէնտերը, Սիւլէյման Պաթուշ և Ալի փաշաները, նաև ուրիշներ որոնք շատ պարագայներու մէջ իրենց զէնքովը՝ ինչպէս Հայն ալ իւր հանճարովը՝ թուրքիան պաշտպանած ու փըրկած են արտաքին շատ մը թշնամիներէ, և ի վարձ իրենց սոյն փրկարար և քաղաքակրթիչ ծառայութիւններուն միշտ ճնշում, ջարդ և հալածանք ունեցած են... Ամէն պարագայի մէջ հիմայ օրուան մեծագոյն մտահոգութիւնը Ալպանիական հսկայ ապստամբութեան օրէ օր ըստացած մեծ ծաւալն է, մանաւանդ սա լուրին վրայ թէ Եազովաի ապըստամբականները որոնք վարողներն են այս շարժման, որոշած են, կըսուի, շարունակել ապստամբութիւնը և յառաջ խաղալ մինչև Պոլսոյ վրայ. տեսնենք սա մեր միշտ յղի երկիրը դեռ ուրիշ ինչ նորերու անակնկալներու ծնունդ պիտի տայ:

Ալպանիոյ վերջին լուրերը ծանրակիւ են: Պայրամ, կանի և Սաթըզ ապստամբականները 25.000 ալպանիացուց գլուխն անցած Ֆէրիշովիքը բռնած են: Ապստամբներուն թիւը որ 70.000 հոգի էր նախ, այժմ 150.000 հոգուոյ բարձրացած է. բոլոր այս ալպանիացիք վըճառապէս որոշած են Սկիպի վրայ քալել և զայն թալլել լիցուներէ եթէ իրենց գոհացում չի տրուի: Արդէն հեռագիրները կըսեն թէ մեծ վտանգը հոն է որ կատարած ապստամբ ալպանացիք սկսած են ալան թալանի Մակեդոնիոյ և Ալպանիոյ մէջ:

Աղբային Պատրիարքարանը այս օրերս կարևոր որոշում մը տուաւ նոր Դահլիճին ներկայացնելու ընդհանուր թագրեր մը, ուր ի դիմառնուած են մի քանի ամիսներէ ի վեր կառավարութեան ներկայաց

ւած և անլուրի մնացած առաւել քան յիսուն թագրերներու մեկ ամփոփոյքը՝ Հայկական ցաւերու մասին: Սպասենք և յուսանք:

Վերջին պահուն կիմանամ թէ խորհրդարանին լուծման իրատէնելած է, կառավարութեան հետ յերակոյտին ունեցած մէկ դռնփակ նստէն յետոյ: Կուսակցութեանց, սպայներու ու ժողովրդեան մէջ միտքերը ծայրայեղօրէն լարուած են. եթէ զօրաւոր և ազդեցիկ միջոցներով առաջը չառնուի, շատ մը պատահականութիւններ կը վախցուի սոյն անլուրիական վիճակին մէջ:

Իսկիւտար ՅԻՐԱՆ-ՔՈՐԳԻՍ

ՀԱՅԵՐ Ի ԹԻՒՐԻՔԻԱ

Հայաստանէն անապահովութեան դանդաղներ անպակաս էին արդէն. թիւրքիաի կառավարական վերջին դէպքերը, Ալպանիաի յուղումը և սպայների ըմբոստութիւնը, Երեսփոխանական ժողովի լուծումը և այլն, կարծես Հայաստանի աւազակ Գիւրտերին և բարբարոսներին յոյսեր ներշնչեց են նախկին համիտեան ընթիմի վերագրածի, որով սկսեցին անկախութեան դառնալ իրենց սովորական շարագործութիւնների մէջ:

Աղթամարի կաթողիկոսական փոխանորդ Եղնիկ վարդապետէն կ. պօլիս շրջուած յուլիս 19/1 օգոստոս ամսաթիւ հեռագիր մը կը յայտնէ թէ Գաւաշէն 2 Հայ, խիզանէն 2 և Եատախի գիւղերէն ալ 2, ամէնը 6 Հայեր սպաննուեցան նոյն օրեր: Ապահովութիւն չկայ և ամբողջ ժողովուրդը մտատանջութեան մէջ է իր կեանքի համար:

Մուշի առաջնորդ խորախանեան Եպիսկոպոս ալ հեռագրած է նոյն թըւականով:

« Խոյթի նշանաւոր աւազակները է թեի բաժնուելով կտրած են ճանբայները: Երթեկեղ զագրած է: Մարթիկ գիւղէն 8 ոչխար տարուած է: Խոյթի Հայերը սարսափի մէջ են: Կացութիւնը շատ ծանր է. շուտով միջոցներ ձեռք առնել պէտք է: »

— Չիթունէն գրած են Ազատու մարտին. « Չիթունի աղլկանց վարժարանին ամովերջի հանդէսը տեղի ունեցաւ յուլիս 3ին: Ընդհանուր երևոյթը շատ լաւ էր. մանաւանդ օրիորդներու երգած կոմիտաս վարդապետի մեկ քանի համերգները նորութիւններ էին: Ազգանուէր Հայաստանց Ընկերութեան ընդհանրապէս, իսկ Օրիորդ Չարուհի ֆէշտի մալեանի և Յիկին Լուսի Ետաղու պեանի սրտանուէր լանքերը մասնաւորապէս, բարձրացնելով զբարոցը իր ինկած դրութենէն, լոյս աշխարհ կուտան հինգ անգրանիկ շրջանաւարտուհիներ: Աղլկանց զբարոցը շատ աւելի բարձր մակարդակի մը վրայ կը գտնուի քան մանչերու դպրոցը՝ կրթական, բարոյական, կարգապահական և վարչական այլազան տեսակէտներով: Երջանաւարտ օրիորդներէն երկուքը՝ Հայուհեացի հոգածութեամբ իրենց ուսումը կա

տարելագործելու հետամուտ պիտի ըլլան բարձրագոյն հաստատութիւններու մէջ, ըլլալու համար տեղիս ապագայի ուսուցչուհիները: Ետտ ցաւալի է սակայն աշակերտուհիները տեսնել գեանալարկ շէնքի մը մէջ, երբ անդին հարիւրաւոր սկիներ վատնուած են՝ կիսաւարտ շէնքի մը վրայ, ասոր անոր կոկորդն ի վար: Այս անստոյգ դրութեան դարձումը գտնելու և կիսաւարտ դպրոցը վերջնականապէս բարձրացնելու կանխամտածութիւնով, աղլիկներուն համետ ձեռագործները վիճակահանութեան դրուեցան և անսպասելի առատաձեւութեամբ, ի նպաստ զբարոցին տարը օսմ. սկի հաւաքուեցաւ: »

ԱՄԵՐԻԿԱԻ ՀԱՅԵՐԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Կիմանանք թէ Եւրոպայի առաջնորդ Գեր. Դէնորդ Եպ. Իւթիւճեան, ինչպէս կենթադրէինք արդէն, Ամերիկայի Հայոց Հայրապետին յայտներ է իր Ամերիկա երթալու անկարելիութիւնը: Թէ՛ զինք սովորապէս դարձանող անգլիացի թիւրքի կը թէ՛ Տօքթ. Մախոսեան որ այս միջոցին Անգլիա գտնուելով քննեց Գեր. Իւթիւճեանի առողջական վիճակը, յայտարարեցին թէ իր ներկայ վիճակի մէջ վըտանգաւոր է Ռեքիկա երթալը և կրնայ հիւանդութիւնը սաստկանալով տխուր հետեանքներ ունենալ: մանաւանդ որ իրեն յանձնուած պաշտօնը դիւրատար ալ չէ. վարչագիտութիւնն ու խաղաղասէր և անկողմակալ բընաւորութիւնը չեն բաւեր, պնդակալմ առողջութիւն ալ պէտք է ունենալ դիմագրաւելու համար այն սրտմտացուցիչ յուղումներին ոչ Մուշեղ Եպ. տրամադիր կերելի իրեւ նոր նիկով մը յամառութեամբ յարուցանել ի վիաս հայ աղբին և եկեղեցիին, իրեն շուրջ բոլորած լինելով միամիտ և կամ այլևայլ նկատումներէ դրդուած մի քանի անձեր:

ՎԱՆ ԵՒ ԱՄԵՐԻԿԱԻ ՀԱՅԵՐԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 1911ԻՆ

Ֆրանսական հիւպատոսարանէն կառավարութեան հազարուած պաշտօնական տեղեկագրէն կը քողեմք հետեւալը:

Վան, յուլիս 1912. — Արտանաւուրիւն. — Երկրագործութիւն:

Փոքր-Ասիայի արեւելեան մասի հողը բարեբեր է: Իր դաշտեր, ջրի փոքրիկ հոսանքներով առատապէս ոռոգուած, շատ լաւ կը յարմարին ցորենի, գարիի, մարացորենի, բանջարեղէնների (լուբիա, ոլոռ, սոս, բակալ, գետնախնձոր, գդու, լոլիկ և այլն), ծխախոտի և մի քանի տեղեր որթատունկի ալ մշակութեան: Իր բարձր սարահարթները շատ ընտիր արօտավայրներ կուտան անասնապահութեան համար: Այսու ամենայնիւ, այս երկրի բնակիչները շատ

աղքատ են: Բնութեան իրենց արտադրութեան տակ դրածէն չեն օգտուիր: Իրենց այդ վիճակի գլխաւոր պատճառներն են նախ հազարապետութեան միջոցների չդրուելը որ անկարելի կը դարձունէ բերքերի արտահանութիւնը, յետոյ անապահովութիւնը որով գիւղացին կենթարկուի քիւրտ աւազակների կողմապետներին, և վերջապէս հնչուն դրամի պակասութիւնը որով գիւղացին կը ստիպուի գիւղի երկրի «երեւելի» ներ յին որոնք հունձքին վրայ իրենց կանխավճար կընեն վաշխառուական տոկոսներով որոնք երբեք մինչև իսկ 1/6ին 75ի կը հասնին: Գիւղացին չըկրնալով արտահանել իր աշխատանքի արդիւնքը և ոչ ալ ինք վայելել ազատօրէն, յիօտարիւր աւելի ընդարձակ գործունեութեամբ քիչ մ'աւելի բարեկեցութիւն ձեռք բերել, այլ ընդհակառակ կը լանայ կարելի եղածին չափ սահմանափակել իր պէտքերը: հետևապէս կը մշակէ ճիշդ այն չափ որչափ անհրաժեշտ է իրեն:

Վանի և Պիթիլիի (Բաղէ) նահանգներին մէջ հողագործութեամբ կը զբաղին ընդհանրապէս Հայեր, Գաղղեացիներ և Արիի (նստական) Գիւրտեր, մինչդեռ քեօլէր (թափառական) Գիւրտերը և լեանաբնակ Նոտորականները անասնապահութեամբ կը զբաղին մասնաւորապէս: Ասոնք ամառը կը թողուն իրենց գիւղեր և կերթան Եսալլաները (1) արածել իրենց հօտեր:

Հունձքը վերջացածին պէս՝ գիւղացին իր ցորենի այն մասը որին պէտք չունի իր տան ուտելու համար, կը տանի ամէնէն մօտակայ տեղը ծախելու ուր վաճառականները շնչին դնով մը ծախու կապեն և յետոյ ձեռք շատ մեծ շահով կը ծախեն: Այսպիսի հօտերը աշունին կը տարուին Տիարպէթի և Հոլեպուրկէ կը շրջուին թիւրքի գահապան մասերը և Եգիպտոս:

1911ի հունձքը որ կը յուսացուէր թէ լաւ պիտի լինէր, միջին վիճակ մը ունեցաւ երտային պատճառով:

Հացարոյսերի գինները մեկ տարեկան միւսը շատ կը փոխուին, մանաւանդ հազարապետութեան միջոցների պակասութեան պատճառով. այն տարին որ հունձքը լաւ է, ցորենները կը փոխին իրենց եղած տեղը և գինները շատ կիւնան. իսկ այն տարին որ գէջ կը լինի, ուրիշ տեղերէ բերելու անկարելիութեան պատճառով գինները շատ կը բարձրանան: 1911ին 1 չափ (2) ցորենը կարժեր 10էն 13 Փրանք և 1 չափ գարին 6էն 8 Փր.:

Դուարի միջին գիններն եղան 1911ին.

Եղ՝	հասը	50 Փրանք
կով՝	»	40 »
Ոչխար՝	»	17 »
Այծ՝	»	14 »

(1) Եսալլաները բարձր լեանադաշտեր են, ջրի փոքրիկ հոսանքներով ոռոգուած բարձր լեանադաշտային միջանոց, ուր թափառական Գիւրտեր կերթան արածել իրենց հօտեր յուլիս ամսէն մինչև սեպտեմբեր:

(2) Մէկ չափը գրէթէ 60 քիլոգրամ է:



Որթատունկը կը մշակուի վանի և շրջակայ մի քանի գիւղերի մէջ, ինչպէս նաև Սղերգի և Մուշի կողմերը որոնք Պիթիւզի վիլայեթին կը պատկանին։ Վանը ծովին մակերևութէն 1.600 մէթրի չափ բարձրութիւն (altitude) ունենալուն պատճառով խաղողը շատ լաւ չհասնիր այստեղ և անկէ հանուած գինին գէշ տեսակէն է։ Այլ սակայն Սղերգի գինին բաւական համաբաւար է տեղացիներէ մէջ։ Օսմանեան Հանրային Պարտքի վարչութեան որ գինին տասանորդի տուրքը կը հաւաքէ, տուած պաշտօնական տեղեկութիւններին համեմատ, վան վիլայեթէն 1911ին արտադրուած գինիի քանակութիւնը եղած է 65.000 քիլոգրամ։ Իայց իրազեկ անձեր կրեն որ այդ թիւը իրականէն շատ վար է և կը կարծեն որ 1911 թուականին գինիի արտադրութիւնը 150.000 քիլոգրամի հասած կը լինի։ Ինչպէս հասցարոյսերը, նոյնպէս ալ խաղողը բնաւ արտահանութեան ունի նիւթ չկազմեր։

Ծխախոտի մշակութիւնը բաւական ընդարձակուած է վանի գաւառին մէջ։ Իսկ Հէքեարիի գաւառին մէջ շատ յառաջ գնացած է, զլիւսաւորապէս Շամոնեան գաւառակին մէջ որի ծխախոտը, զեղին սաթի գունով, շատ յարգի է, մանաւանդ Պարսկաստանի մէջ ուր կարտահանուի մեծ մասամբ։ 1911ի տվող բերքը եղած է 400.000 քիլոգրամ, 70.000ը վանի սանճագէն (Շատախի, Մոկսի և Գաւաշի կողմեր) և մնացածը Հէքեարիի սանճագէն։ Մաքսախուսութեան հնաւանդ սովորութիւններին պատճառով, որոնք շնչել շատ դժուարին է և վերահսկողութիւնը գրեթէ ապարդիւն, վանի գաւառի ծխախոտի մեծ մասը մաքսախուսութեամբ կը քլուի։ Ծխախոտի օսմանեան յիշման վանի մէջ 1911ին զընած է միայն 20.000 քիլո ծխախոտ, քիլոն 65 սանգիմէն մինչև 1 ֆր. և 10 ստեգիմի. այդ ծխախոտը իր գործարաններէ մէջ յարգարուած ու պատրաստուած է տեղական սպաւման համար։ Շամոնեանի գաւառակին մէջ որ յետ ընկած տեղ մ'է թիւրքակարսկակտն սահմանադիւին վրայ ուր վերահսկողութիւնը բոլորովին անկարելի կը լինի, ծխախոտի բէթի վարչութիւնը աւելի շահաւոր համարած է իր իրաւունքներ յանձնել Շամոնեանի շէյխին, փոխարէն ստանալով անկէ տարեկան վճարք մը։ Այդ շէյխը որ մեծ աղքատութիւն կը վայելէ այն կողմեր, Շամոնեանէն արտասահման զրկուած ծխախոտի ամէն մէկ քիլոն համար 80 սանգիմ տուրք մը կանոն է։ Հաւաքուած տեղեկութիւններին նայելով, 1911ին 200.000 քիլո շախմատ արտահանուած է եղեր դէպի Պարսկաստան։ Ծխախոտի շատ փոքրիկ մէկ մասը միայն կը պատրաստեն փոքրիկ խուրձերով (en mannoques), ամենամեծ մասը ձողերի վրայ վառելով կը շորցունեն, յետոյ կը մանրեն. կերելի թէ դանակով կը տրել անոր բոյրը (arôme) կը վախցունէ եղեր։

Ճարտարարուեստ (Industrie). — Կարելի է ըսել թէ ճարտարարուեստ չկայ, Եղածներն ասոնք են պարզապէս մի քանի շրջապաններ կան որոնց մաշած երկանաքարերը փոքրիկ քարերով լեցուն ալիւր մը կարտադրեն որմէ շինուած հացն ալ լաւ տեսակէն չլինիր. տեսակ մը աճառ կը շինուի որ գէշ հոտ մ'ունի և իր այդ հոտը կուտայ լուացուած լաթերին. սակերիչները սև կիտուածներով զարդարուած արծաթէ բաւական գեղեցիկ բաներ կը շինեն որոնց մեծ մասը կը զրկուի սահմանակից նահանգները և մինչև իսկ Կ. պոլսի և Եգիպտոս. մնառուս կոչուած հաստ կտուէ մի քանի հագուստներ կը շինուին և ատոնց աւելի նուրբ տեսակները կան բրդէ շինուած, որոնք «Շատախի շալ» կը կոչուին. կաշիի մի քանի գործարաններ կան. և վերջապէս կը շինուին կարծ մազերով գորգեր որոնք քիլիմ (կարպետ) կը կոչուին և վարագոյրներ որոնք ձիւթի կը կոչուին։

Օսմանեան կայսրութեան այս հեռուոր նահանգներին մէջ ուր պաշտօնական վիճակագրութիւնները և մաքսային գրասենեակները անծանօթ բաներ են, անկարելի է շատ ճիշդ թիւեր ունենալ վաճառքները արտահանութիւնները և ներքերումները մասին։

ԵՐԿՐԱՇԱՐԺ Կ. ՊՕԼՍԻ ԵՒ ՏԱՐՏԱՆԵԼԻ ՄԷՋ ԵՒ ՄՕՏԱԿԱՅՆԵՐԸ

Կ. պոլսէն եկած հեռագիրները իմացուցին որ օգոստոս 9ի ուրբաթ առաւօտ ժամը 2 1/2ի ատեններ երկրաշարժի երեք զօրաւոր ցնցումներ եղած են որոնք քաղաքին մէջ թեթեւ մնացներ պատճառած են, մի քանի տուններ խարխուղած կամ փլած են, բայց հաւանորէն շարժման կեդրոնը մօտակայ տեղերն եղած է։ Այդ շարժիցնցումները սաստիկ երկրի պատճառներ են Կ. պոլսի ժողովրդին որ արդէն շրագրպիւ դարձած է այս միջոցին։

Սակայն հետզհետէ եկած հեռագրաւորները կը սկսին ահաւելի մանրամասնութիւններ հաղորդել։ Մի քանի տեղեկութիւններ քաղաքով կը պնենք այստեղ։

Կ. պոլսի մէջ Քատիքէյ և Իշխանաց կղզիները մասնաւորապէս սաստիկ եղած է։ Բէրաի մէջ շրի ճանրայներն աւրուեր են։ Օգոստոս 10ի առաւօտ ժամը 11ը 25 անցած նորէն շարժ մեղաւ բաւական զօրաւոր, որով շատ մը շէնքեր մնասուեցան, մանաւանդ ելեմտական, փոստային և հանրային կրթութեան նախարարութիւնները պաշտօնարանները։

Մարմարաի ծովեզրեայ մի քանի քաղաքներ և յունարնակ մի քանի գիւղեր սոսկալի կերպով մնասուած են։ Տարտանէլի (Չանոգ գալէսի)

մէջ շատ մը շէնքեր վիւր և նաւահանգիստը գտնուող շոգեխաններ ցնցուեր են։ Կալիպոլի (Կէլիպոլու) քաղաքը ալ աւելի մնասուած է. ժողովուրդը դաշտերին մէջ վրանարնակ եղած է։ Միրիօֆիլոս, Կանոս, Եօրա և Բէրկադաղիա գրէթէ բոլորովին աւերակ դարձեր են։ Տեղ տեղ տաք շուրեր ժայթքեր են գետնին տակէն։ Լամպեր շուռ գալով հրդեհներ պատճառուեր են։

Ռոստոսթօի (Թէքիրասաղ) մէջ մէկ տուն չէ մնացեր որ չմնասուի։ Հայերի եկեղեցին և վարժարանի մէկ մասը, շուկայի բոյր խանութները փրկուեր են և ապրանքները թաղուեր են փլատակներին տակ։ Մզկիթն ալ կործանուեր և իմամը աւերակներին տակ մնացեր է։ Նոր գորանոցը կիսովին քանդուեր է, բազմաթիւ զօրքեր իր փլատակներին տակ առնելով, 500էն աւելի տուններ այրուեր են։ Միայն Հայերի թաղին եղած մնացած 400.000 ֆրանք կը հաշուեն։

Պրուսաի մէջ ալ շատ մը տուններ վիւր են։

Կրկրաշարժը մնասած է գլխաւորապէս Անդրիանուպոլսի (Էտիրնէ) հարաւ-արեւմտեան կողմերը։ Հեռագրական հաղորդակցութիւնները խըղւած և 15.000 հոգի անպատասպար մնացած են։ Կառավարութիւնը վրաններ և ուտելիք զրկեց իրենց։

Չօրուի մէջ երկրաշարժէն լամպի մը գլորուելով ծագած հրդեհին զոհ եղեր են 200 տուն և 100ի չափ խանութներ։ Այդտեղ եղած մնացած 200.000 օսմ լիբաի կը հասնի։

Լրագիրները կրեն թէ մեռնողներ ի թիւը 1.000ի չափ կը լինի. իսկ վերաւորուածներինը 5 կամ 6 հազարի կը հասնի։

ԹԻԻՐՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Մօնթէնէկրօի սահմանադիւնէն օգոստ. 6ին եկած պաշտօնական լուրերը կը հաստատեն թէ երկու օր շարունակ արինահեղ կռիւներ եղեր են Պէրանի, Գօլաքիի, Սէլիկ և Տօքանի կողմերը. թիւրքական շատ մը ամբողջներ կրակի տրուեր են։ Տեղական թիւրք իշխանութիւններն օգնական զօրք կը պահանջեն ստիպողաբար։

Սալոնիկէն կիմացունեն թէ Օխրիտաի ոստիկան զինուորները հրամանատարը որ իր պաշտօն թողլով 15 ոստիկան-զինուորների հետ մէկտեղ լուր քաշուած էր, կոչ մը ուղղեր է Սալոնիկ և Մանասթըր վերայէրների բոլոր հաւատացեալներին որ իրեն հետ միանան Կ. պոլսի վրայ քաղաք և Գօմիդէի թշնամիներէն վրէժ լուծելու համար։

Օխրիտաի մէջ ժողովուրդը ոտքի ելնելով կողոպտուեր է ազգամթերքի պահեստը. կը բողբէ Երեսփոխանական ժողովի լուծման դէմ։

— Լուր տարածուած լինելով թէ իթթիհատի գօմիդէն կոչ մը պիտի

հրատարակէ ժողովուրդին ուղղուած, ոստիկանութիւնը կը հսկէ «Թանին» յի տպարանին ինչպէս և շատ մը ուրիշ տպարանների վրայ։

— Ոստիկանութեան նախարարը գաւառացի է «Թանին» լրագրին դէմ։

— Չմիանէն հեռագրած են «Քեօլնիշէ Չայթունկ» լրագրին թէ հրաման ստացուած է իրենց տունները վերադարձնելու Անատոլի պահեստի և երկրապահ զօրքերը որոնք Չմիան հաւաքուած էին։

— Կ. պոլսէն օգոստ. 8ին տրուած հեռագիր մը կըսէ թէ զօրավար Մահմուտ Եէվէթ փաշա, Ճավիտ պէյ, Թալէաթ պէյ և Հազզը փաշա նախարարութեան միւս բոլոր անդամները բարձրագոյն ատեանին առջև դատի պիտի քաշուին իրենց անհոգութեան համար որով զերբացուցին իտալացիներին Լիպիա զօրք իջցունելը։

— Բէքերպուրկէն կը հեռագրեն թէ ուսական զեպաններին միոցով հրահանգներ արուեցան Չէթինեէ և Կ. պոլսի որ Մօնթէնէկրօցիները պատերազմական եռանդը չափաւորեն։

Մօնթէնէկրօի Կ. պոլսի գեպանը հաւաստեւ է Բ. Դրան որ իր կառավարութիւնը հրաման զրկուեր է զօրքերին Գօլաքի քաղաքու. թշնամութիւնները գաղթած են, Համաձայնութիւն գոյացեր է որ խառն յանձնաժողով մը զրկուի քննութիւն մ'ընելու այս գործի վրայ։

— Երեսփոխանները հրաւեր ըստացան որ պատրաստուին Էտիրնէ երթալու։

— Կեսարիանէն հեռագրած են Քրանսական լրագիրներին թէ հեղեղանման անձրևներէ գոյացած ողողումներ 2 միլիոն ֆրանքէ աւելի վընաս հասուցին։ Հեղեղները մէկ քանի մարգեր ալ քշեր տարեր են։

— Կ. պոլսի պաշարման վիճակը հրատարակող հրամանագրին մէջ, ի միջի այլոց, արգելուած է ալոււմ, ներին մէջ բաց է բաց պրոպագանդընել քաղաքական կուսակցութիւններին թէր կամ դէմ, կառավարութեան քաղաքականութեան և երկրին արդի վիճակին նկատմամբ յայտարարութիւններ ցրուել կամ պատերի վրայ փակցուել առանց մասնաւոր թոյլտուութեան և այլն։

— Կ. պոլսէն հեռագրած են օգոստ. 7ին. «Երեսփոխարդ-թիւրք կուսակցութեան գլխաւորները և լուծուած Երեսփ. ժողովի այն անդամներ որոնք արդի կառավարութեան հակառակ են, կուզեն յարգը գուժարել Սալոնիկի մէջ և մասնաւոր Դահլիճ մը կազմել, իբրև մեծ-եպոս ունենալով Ասիմ պէյը, իբրքին գործերի նախարար՝ Թալէաթ պէյը, արտաքին գործերի նախարար՝ Պապանզատէ իսմայիլ Հազզը պէյը և ելեմտական նախարար՝ Ճավիտ պէյը։ Գօմիդէն մտադիր է Սալոնիկէն յայտարարութիւն մը հանել։ Բ. Դրան երբ իմացաւ այս ծրագիրներ, միջոցներ ձեռք առաւ որ եթէ



այդպիսի հակառակ դատարան մը կազմուի, անմիջապէս ձերբակալեն անոր անգամները : Պաշտօնական վիճակ հըրատարակուեցաւ Սալոնիկի մէջ :

« Կը հաւաստեն թէ կառավարութիւնը հրաման տուած է ձերբակալելու Սալոնիկի մէջ ճամբար պէյը իր այն ճառի պատճառով որ անցած երկուշաբթի օր խօսեցաւ Երեսփոխանական ժողովին մէջ և որ ապրտուածութեան հրաւեր կը նկատուի : Կը հաւաստեն նաև թէ կառավարութիւնը պատերազմական ատենի մը առջև զրկած է 42 սպայներ որոնք կիրակի օր Ազատութեան բլուրին վրայ եղած ցոյցին մասնակցած են : »

— Իթիբակատի բերանն եղող « Թանին » լրագիրն իր հրատարակութիւնը դադարեցուցեր է : Խմբագրական իր վերջին յօդուածի մէջ գրած է. « Մենք չենք ըսեր Ձեռք բարոյքայնացուածութիւն : Խմբագրականը Սալոնիկի գնացեր է, կուսակցութեան գլխաւորներին հետ մէկտեղ : Իթիբակատի գոմիշէին պատկանող ուրիշ բոլոր թերթերն ալ դադարեցուցին իրենց հրատարակութիւնն :

— Չէթինեէն կիմացունեն որ սահմանազխին վրայ թիւրք զօրքերին և Մանթենէկրօցիններին միջև նորէն կռիւ մը պատահեր է օգոստոսի 9ին : Հեռագիրը կրտէ թէ թիւրքերը որ նախադրեալ եղած էին, յետ մղուեր են : Մանթենէկրօի կառավարութիւնը շրջաբերական մը զրկելով Չէթինեէ գտնուող զեապաններին, ինքերն է որ մեծ տէրութիւնները նկատի առնեն Մանթենէկրօի գրտնուած գծուարին կացութիւնը և բարեհաճին արմատական դարման մը աանել :

— Պուլկարիաի թագաւորը որ Աւստրիա կը ճանրորդէր, թիւրքերէն ստացած վերջին լուրերին վրայ ընդհատեալով իր ճանրորութիւն, յանկարծ վերադարձաւ Մոֆիա :

ՔՕՉԱՆԱԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Սոֆիանէ կը հեռագրեն օգոստոսի 9ին. « Քօչանաի մէջ Պուլկարիերի կոտորածը ի սկզբան պատմուածէն շատ աւելի մեծ է : Արտաքին գործերի նախարարութեան հասած տեղեկութիւններին նայելով, 100ի չափ սպանուածներ կան և 200ն աւելի վիրաւորուածներ : Պուլկարիաի առողջապահական բարձրագոյն խորհուրդը ստիպողաբար գումարուելով որոշեց զեղեր ու բժիշկներ զրկել կոտորածին տեղը : Տեղական թիւրք իշխանութիւնները պիտի թողնեն այս մարտասիրական պատերազմութեան իր պաշտօնը կատարել թէ օտար միջամտութեան պատրուակին տակ պիտի հակառակին :

Քօչանաէն եկած լուրերին պատճառով ամբողջ Պուլկարիաի մէջ տիրող յուզումը այն աստիճան սաստիկ է որ 30 տարեկէ ի վեր ատոր նմանը չէր տեսնուած : Ազգը միաձայն ոտքի ելած պատերազմ կը պահանջէ : մի քանի օրէ ի վեր ամէն օր միգրիկներ կը գումարուին մակեդոնացի զաւթականներ զլիաւորներին նախաձեռնութեամբ և ներկայ կը գտնուին լրագրականները և քաղաքական կուսակցութիւններին ներկայացուցիչները :

Այդ միգրիկներին մէջ տիրող ձայնը սաստիկ պատերազմաշունչ է : կառավարական կուսակցութեան ներկայացուցիչները ալ պահպան եռանդոտ չեն կտրուել գործունէութիւն մը պահանջելու մասին : Այսու ամենայնիւ, կը կարծուի թէ պուլկար կառավարութիւնը բոլորովին կը պահէ իր պաշարիւնութիւնը և ժամանակը յարմար շտեմներ Արեւելեան խնդիրը մէկտեղ նետելու : Իր կողմէն Վ. Պօլիս եղած գիտութիւնը բարեկամական ռոմի եւ տակաւին, թէև ստիպողական :

Այսօր կիմացուի թէ տիւնմիգրով նոր ռմբափորմ մեղած է մակեդոնական երկարութիւններին վրայ : Տեղափոխական ծրագրի գործադրութիւնն է այս որ մակեդոնական ներքին կազմակերպութիւնը որոշած էր, պատերազմութեան պաշտօնով Սերուպի մարտաքաղաքներն իր զրկուած երկուսուսուցապետներին վերադարձնել յետոյ : Ամէն ինչ կանխապես կուտայ թէ ահալիկիշ (տէպորիստակ) գործողութիւններին շարք մը սխալած է : Արտփետու թիւրքերն ալ իրենց կողմէ որոշած կերպին ռմբափորմներն պատասխանել կոտորածներով, կացութիւնը հետզհետէ աւելի պիտի ծանրանայ այս կերպով : »

ՎԱՐՁԱՊԵՏ Տ. ՓՈՒՆՏԱՐԷԻ

Պրանսի և Ռուսիաի միջև նաւային գործունէութեան համար նոր պայմանագրի մը կնքուիլը և Պրանսի վարչապետ Տ. Փուանգարէին Ռէպուպլիկ երթալը մասնաւոր ուղարկութիւն գրաւած է Գերմանիաի մէջ ուր մամուլը զանազան մեկնութիւններ կուտայ այս շարժման և այլընդայնոց ենթադրութիւններ կընէ :

Սակայն այս տեսակցութիւնները վերագրուիլ հանգամանք մը չունին Գերմանիաի համար, ընդհակառակ, խաղաղութեան ամապաղման նպատակով բանակցութիւններ կը լինին և Պալիկեան նաւահանգստին մէջ Գերմանիաի և Ռուսիաի կայսրերի տեսակցութեան յետոյ Պրանսի վարչապետին ալ Պետերբուրգ երթալով Յարին հետ տեսակցիլը Գերմանացի խաղաղասէրներին աւելի հանոյք պէտք է պատճառէ քան թէ կասկածաբար ինչ ֆրանսուսական նաւային նոր պայմանագրի մը կնքուիլը բնական հետեանքն էր իտալիկերը պատերազմին պատճառով Միջերկրական ծովին մէջ իտալիաի գրաւած նոր գիրքին քանի որ այժմ անոր ձեռքն անցած կղզիներին բոլորովին թիւրքերի վերադարձուիլը կասկածելի կերպի :

Կը կարծուի թէ Տ. Փուանգարէ իտալիկերը պատերազմին նկատմամբ նոր առաջարկ մը պիտի ներկայացունէ ռուս կառավարութեան, բայց թէ ինչպիսի առաջարկ մ'է այդ, յայտնի չէ քեզ : Այսչափին իմացուած է որ վերջին ամիսներին մէջ, մասնաւորապէս մայիսի և յունիսի մէջ, Պրանսա, Անգլիա և Ռուսիա միմեկուրէր բանակցութիւններ ունեցան Արեւելի գործերին և իտալիկերը պատերազմին նկատմամբ :

Ինչպէս արդէն հրատարակած էինք, Տ. Փուանգարէ օգոստոսի 5ին Տէօնքէթի նաւահանգստէն մեկնած է « Գօնտէ » շոքեանով : Ճանապարհին, Պալիկ ծովին մէջ մտած ատեն, և զրահաւորներէ և 15-18ի շափ դորբիւնաւերէ բազկացած գերմանական նաւաբաժնի մը հանպիպեցաւ « Գօնտէ » : Յայտնի չէ թէ այդ հանգիպումը յատկապէս կարգա-

դրուած էր թէ դիպուածի մը արդիւնք էր : Գերմանական մարտանաւերը խռովուած չէին, այլ մի տեսակ շրջանակ կը կազմէին. անոնցմէ 3 զրահաւորներ թընդառեթի 21 հարուածներով ողուեցին Պրանսի վարչապետին գրօշակո. « Գօնտէ » ալ հարուած առ հարուած պատասխանեց այդ յարգանքի ողջոյնին :

Սրբ « Գօնտէ » օգոստոսի 9ին հասաւ Գրօնդատ, Ռուսիաի ծովային նախարարը ծովակալ Գրիգորովիչ անոր գիմաւորեց « Նէվա » զբոսուաւով ուր ճաշկերոյթ մը տուաւ Տ. Փուանգարէին : Նոյն օր Տ. Փուանգարէ հասաւ Պետերբուրգ ուր նաւամատոյցը իրեն զիմաւորեցին վարչապետ կոկոզցե, արտաքին գործերի նախարար Սազոնով, Փարիզի ռուսական դեսպան Իզվոլսքի և այլն : Ներկայ գտնուող ժողովուրդը ոգևորուած կեցցելի ազդակներով ընդունեց Պրանսի վարչապետին որ ուղղակի Քրանսական դեսպանատունը երթալով քիչ մը հանգստանալէ յետոյ, իր պաշտօնական այցելութիւններ տուաւ և հետաքրքրական մի քանի տեղեր պտտեցաւ : Կէսօրէն յետոյ ժամը 3ին քնաց տեսնուի Տ. Սազոնովի հետ, իստակցութիւնը երկարեցաւ այնտեղ մէկ ժամ և մէկ քառօրէ. յետոյ, յցելեց կոկոզցելին որի հետ կէս ժամ խօսակցեցաւ : Այդ խօսակցութիւններին մասին ռեէ զեկոյց չհաղորդուեցաւ մամուլին :

Օգոստոսի 10ին Տ. Փուանգարէ ունկընդործութեան ընդունուեցաւ Յարէն և Յարուհին Ռէպուպլիկ պալատին մէջ ուր իրեն ճաշկերոյթ մը տրուեցաւ : Ճաշկերոյթի միջոցին և յետոյ, Յարը երկարօրէն և սիրալիտ տեսակցութիւն մ'ունեցաւ Տ. Փուանգարէի հետ : Սրեկոյին Տ. Փուանգարէ հրաւիրուեցաւ Գրանտօ-Սէլթի բանակատեղը ուր 60.000 զօրք հաւաքուած էին և Նիքոլա ցարն անձամբ հոն երթալով զօրահանդէս մ'ընել տըւաւ հետեւեալ օր և իր ձին հեծած աչքէ անցուց զօրքերը : Տեսարանը շատ տպաւորիչ էր :

Չօրահանդէսին սկսուելէն յառաջ, Տ. Փուանգարէ Տ. Սազոնովի հետ խօսակցելով դարձապարմ կը պտտուի, իրենց խօսակցութեան նիւթ եղեր է Պալքանների վիճակը և « Թան » լրագրի թղթակիցը որ այնտեղ կը գտնուէր, կը գրէ թէ անոնց իր մօտէն անցած ատենը մի քանի անգամ լսեր է « Անտուուրի երկարութիւններ » խօսքը :

Չօրահանդէսէն յետոյ, Յարը վրանին տակ ճաշկերոյթ մը տուաւ Տ. Փուանգարէին : Սրեկոյին Տ. Փուանգարէ Պետերբուրգ վերադառնալով Տ. Սազոնովի հետ նորէն խօսակցութիւն մ'ունեցաւ որ երկու ժամ տեւեց : Գիշերը պատուաճաշի հրաւիրուեցաւ վարչապետ Տ. Կոկոզցելի կողմէն : Ճաշը վերջացաւ ժամը 10 1/2ին, որմէ յետոյ Տ. Փուանգարէ մնաց Տ. Կոկոզցելի հետ և խօսակցութիւն մ'ունեցաւ որ տեւեց մինչև կէսգիշերը կէս ժամ անցած : Ժամը մէկն էր արդէն երբ Քրանսական դեսպանատունը վերադարձաւ :

Կըսուի թէ Յարը Տ. Փուանգարէի հետ իր մէկ տեսակցութեան միջոցին խօսելով իտալիկերը պատերազմին վրայ, յոյս յայտնեց թէ չուտով պիտի վերջանայ և ըսեր է թէ ինք վստահ է ռուս պետական անձնաւորութիւններին տեսակցութեան արդիւնքներին վրայ :

Թէհրանէն կը հաղորդեն օգոստոսի 8ին թէ 190 ստիկան-զինուորներ, որոնց 96ն հետիոտ և 89ն ձիաւոր, Եուէտացի Սիւֆֆարդ և Լիսիքոմ սպայների հրամանատարութեան տակ կուուեցան Սալար էտ Տաուլէի կուսակիցներին հետ և յաղթուեցան սնոնցմէ : Կուուր տեղի ունեցաւ Պիլինկամի մէջ : Սիւֆֆարդ սպան վերաւորուեցաւ, յետոյ բունկըին կախեցին զինք և ձին ալ սպանեցին : Ոստիկան-զինուորները նոր մեկնած էին Երազէն, երթալ յարձակելու համար աւաղակներին վրայ որոնք Երազէն Պուշիր տանող ճանապարհին վրայ իրենց յախչտակութիւններով արգելք կը լինէին վաճառականութեան : Թըշնամին գրաւեց ոտտիկան-զինուորների գրէթէ բոլոր հրացանները և մէկ թնդանօթը :

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Շէյքսբիր - ՌՕՄԵՕ ԵՒ ԺԻՒԼԻԵԻ. Ոչբերք հիւղ արարքով, բնագրէն թարգմանեց Մետրոպոլիտանը, 1912 : Գին 5 զրուշ = 1 Փր. և 25 սանդիմ կամ 35 սնեղ ամերիկեան : Գրատի ծախքով մէկտեղ : Ստանալու համար դիմել Իզմիրի և Վ. պօլի գրաւաճառներին և կամ ուղղակի հեղինակին, Իզմիր (Mr. Mesrob Noubarian, Smyrne-Turquie) :

(Շէյքսբիրի աշխարհահռչակ ողբերգութիւններէ մին, Ռոմիօ եւ Յուլիէթ, որ թէև շատ մը լեզուներ թարգմանուած բայց դեռ հայերէնի չէր վերածուած, լոյս տեսած է այժմ Տ. Մետրոպոլիտան պարիսի թարգմանութեամբ : Յայտնի է որ Շէյքսբիրի այս հիանալի թատերախաղը հայերէնի թարգմանելը գիւրիս գործ մը չէ. բայց Տ. Մ. Նուպարեան որ անգլիկերէնի և Քրանսերէնի քաջահըմուտ է և արդէն ծառօթ է այդ երկու լեզուներէն իր թարգմանած բազմաթիւ երկասիրութիւններով որոնք լոյս տեսած են Իզմիր, Պօլիս, Քիւրիկ և Վենետիկ, յաջողած է նաև այս նշանաւոր ողբերգութիւնը ընտիր թարգմանութեամբ մը վերածել հայերէնի : Ինչիչ բառերի և բազատութիւններին մասին ընթերցողին աւելի լուսաբանելու համար ծառօթութիւններ ալ աւելցուած են) :

Յակոբ Եանպագեան. — ԻԻԻԻԻՕ-ՆԱԵ ՊԱՍՏՈՒԹԻՒՆ. Կ. պօլիս : Տպարան « Արաք ». 1911 : Գինը 10 զրուշ : (Իբերուրի պատմութեան, անոնց անցեալ և ներկայ վիճակին, Հայերի հետ ունեցած յարաբերութիւններին վրայ և այլն խիստ հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կուտայ որոնց ծանօթանալ շատ կարեւոր է քանի որ Հայաստանի մէջ մեզի բնակակից զլիաւոր ազգէն է ըբերողը : Կարծէ որ Հայաստանի վիճակով հետաքրքրուող ամէն Հայ այս « Իբերուր-Հայ պատմութիւն » ալ աչքէ անցուցած լինի) :

ՏՅՕՐԷՆ-ԻՄՊՐԻՄԵՐԻ  
Մ. ՓԱՐՓՅԱԳԱԼՆԵՆ  
ՄԱՐՍԵՅԷ  
Հայերէն տպարան Մ. Փարբոկայեանի  
Le Gérant: François CARRIERE  
Marseille. — Imprimerie da Midi